



<https://www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

## Դեղորայքային բուժում

Տարբերակ 2016

### 2. Ցիկլոսպորին A

#### 2.1 Նկարագրությունը

Ցիկլոսպորին A-ն իմունոճնշիչ դեղ է, որ ի սկզբանե օգտագործվում էր՝ կանխարգելու օրգանի "մերժումը", փոխպատվաստման վիրահատություններ տարած հիվանդների մոտ, բայց այժմ նաև օգտագործվում է մանկական ռեմատիկ հիվանդություններում: Այս պրեպարատը հզոր ճնշող ազդեցություն ունի արյան որոշակի սպիտակ բջիջների վրա, որոնք կարևոր դեր են խաղում իմուն պատասխանի առաջացման գործում:

#### 2.2 Դոզան / նշանակման եղանակները

Այն նշանակվում է հեղուկի կամ հաբերի ձևով 3-5 մգ/կգ/օրը երկու անգամ ընդունման:

#### 2.3 Կողմնային ազդեցությունները

Կողմնային ազդեցությունները բավական հաճախ են առաջանում, հատկապես բարձր դոզաների դեպքում. սրանք կարող են նաև բուժումն ընդհատելու պատճառ դառնալ: Դրանցից են՝ երիկամների ախտահարումը, արյան ճնշման բարձրացումը, յարդի ախտահարումը, լսողության գերաճը, մարմնի մազակալման ուժեղացումը, սրտխառնոցը և փսխումը:

Ցիկլոսպորինով բուժումը պահանջում է կանոնավոր կլինիկական և լաբորատոր հսկողություն՝ դեղամիջոցի կողմնային ազդեցությունները գնահատելու համար: Պետք է կանոնավոր հսկվի արյան ճնշումը երեխաների մոտ:

---

## **2.4 Ցուցումները հիմնական մակայան ռեմատիկ հիվանդությունների ժամանակ**

Մակրոֆագների Ակտիվացման Համախտանիշ

Յուզենիլ Դերմատոմիոզիտ

Նորանոր դեղեր են ստեղծվում Մանկական Ռեմատոլոգիական Միջազգային Փորձարկումների Կազմակերպության (PRINTO) և Մանկական Ռեմատոլոգիական Համագործակցական Հետազոտական Խմբի (PRCSG at [www.prcsg.org](http://www.prcsg.org)) դեղագործական ընկերություններում և կլինիկական հետազոտողների կողմից: PRINTO և PRCSG ներգրավված են պրոտոկոլների, հիվանդության պատմությունների, վերանայման, տվյալների հավաքագրման, տվյալների վերլուծման և բժշկական գրականությունում հաշվետվության մեջ:

Մինչև ձեր բժիշկը իրավունք կունենա նշանակել նոր դեղամիջոց, պետք է մանրամասն ստուգվի դրա անվտանգությունը և հիվանդին բուժելու կարողությունը կլինիկական փորձերով: Սովորաբար դեղի օգտագործումը երեխաների մոտ հաջորդ քայլն է մեծահասակների մոտ դրանց օգտագործումից հետո, հետևաբար որոշ դեղեր կարող են կիրառվել միայն մեծահասակների մոտ: Թուլյատրելի դեղորայքների աճի հետ զուգահեռ նվազում են առանց գրանցման դեղերի օգտագործումը: Դուք կարող եք օգնել նոր դեղերի զարգացմանը՝ մասնակցելով կլինիկական փորձերին:

Ավելի շատ տեղեկատվություն կարող եք գտնել հեռևյալ կայքերում.

PRINTO [www.printo.it](http://www.printo.it); <https://www.printo.it/pediatric-rheumatology/>

PRCSG [www.prcsg.org](http://www.prcsg.org)

Ընթացքում գտնվող կլինիկական փորձեր

[www.clinicaltrialsregister.eu/](http://www.clinicaltrialsregister.eu/)

[www.clinicaltrials.gov](http://www.clinicaltrials.gov)

Եվրոպայում երեխաների համար նոր դեղորայքի զարգացման համաձայնեցված պլաններ

[www.ema.europa.eu/ema/index.jsp?curl=pages/medicines/landing/pip\\_search.jsp&mid=WC0b01ac058001d129](http://www.ema.europa.eu/ema/index.jsp?curl=pages/medicines/landing/pip_search.jsp&mid=WC0b01ac058001d129)